Թափանդլեցի Ժամկոչի կին Եղիսաբէթ		25
,, Կիրակոսի կին Սանամ		15
,, Բալոյ Սիմէոնեան		25
,, Պողոս Սարգսեան		20
,, Սարդիս Յարութիւնեան		20
Նալբանդլեցի Թորոս Տէր Դաւթեան	1	
,, Յովհաննէս Ալէքսանեան	1	
,, Պետրոս Յարութիւնեան	1	
,, Գալուստ Աբրահամեան	1	
,, Նահապետ Եղիազարեան	1	
,, Մկրտիչ Յակոբեան	1	
,, Համբար Գրիգորեան		60
,, Յովակիմ Սերովբեան		50
,, Նահապետ Համբարեանց		60
,, Նահապետ Պալեան		60
,, Մարտիրոս Պետրոսեան		60
,, Մինաս Գրիգորեան		50
,, Յովհաննէս Սիմէոնեան		40
,, Գալուստ Սարգսեան		20
,, Գալուստ Մանուկեան		60
,, Սահակ Կոստանդեան		20
,, Յովհաննէս Մովսէսեան		25
,, Յովհաննէս Աւետեան		30
,, Կիրակոս Ներսէսեան		20
,, Աւետիս Մարտիրոսեան		50
,, Պետրոս Պողոսեան		40
,, Կարապետ Իզիտխանեան		40
,, Ստեփան Զատիկեան		20
,, Առաքել Մկրտչեան		20
,, Յարութիւն Կիրակոսեան		40
,, Յակոբ Ստեփանեան		40
,, Կիւրեղ Նիկողայոսեան		40
,, Խաչատուր Առաքելեան		40
,, Յարութիւն Մանուկեան		20
,, Բարսեղ Սարգսեան		30
,, Յարութիւն Աւագեան		30
,, Ներսէս Մկրտչեան		10
,, Իսրայէլ Մանուկեան		10
,, Մանուկ Կիւրեղեան		40
,, Մկրտիչ Մարտիրոսեան		10
,, Ղազար Սարգսեան		50
,, Յովհաննէս Մանուկեան		20
,, Կարապետ Գալստեան		20
Նալբանդլեցի Ղազար Ստեփանեան		80
,, Թովմաս քահանայ Տէր Դաւթեան		50

(Շարունակելի)

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
ԻՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ.

Ազգային Ընդհանուր Ժողովն Կ. Պոլսոյ ընտրեց վերջապէս իւր Պատրիարքը։ Այս ընտրեալը է Կ.—Պոլսեցի Ներսէս Արքեպիսկոպոսն Վարժապետեան

Բազմաց յայտնի է՝ թէ մի ժամանակէ ի վեր ընդհանրապէս Տաճկաստանի՝ և ի մասնաւորի Կ.—Պոլսոյ մէջ մեր ազգային գործերը ինչ վիճակի հասած են։ Զարմանալի չէր եթէ մի ատեն նոքա կառավարուելով բացարձակապէս ըստ հաճոյից մի քանի զօրաւոր ամիրայից, Օսմանեան կայսերաց կողմանէ ի վաղուց անտի շնորհուած արտօնութիւններէն Ազգն իւր կենսական օգուտները սակաւ կը քաղէր, և բարոյական, նիւթական և մասաւորական զարգացումն ստանալ հետի էր շատերու մտքերէն։ Այն ատեն սակաւին ժողովուրդն խոր տգիտութեան մէջ շաղախեալ, հազիւ գիտէր մեքենայապէս թէ ինքը Հայ է և Հայ եկեղեցւոյ որդի. անկից անդին ոչինչ չգիտէր և չէր զգար, և այս էր պատճառն՝ որ իւր ազգային գործոց զեկը մի քանի յառաջադէմ ազգայնոց ձեռքը թողած՝ կամ ժամանակի պահանջներէն ստիպեալ էր, և անտարբեր կը մնար որ և իցէ բաներու մէջ՝ ուսկից կախումն ունէր իւր բարոյական մահը կամ կեանքը։

1860 ին՝ Ազգային Սահմանադրութիւնն առաջին անգամ հրատարակուելով և հաստատուելով ի Պոլիս՝ իրաց վիճակը վեր ի վայր ասպաստեց. նորա աղօգուտ սկզբունքներն ժողովուրդը իւր խոր թմրութենէն զարթեցնելով՝ ցոյց տուին և հասկցուցին իւրաքանչիւրոց անհատական իրաւունքները։ Զգաց ամենայնտին Հայը՝ թէ ինչպէս հարուստ ամիրան, նոյնպէս և ինքն ունէր իրաւունք ազգային գործոց վերայ խորհելոյ, ազգին ցաւոց տեղեկանալոյ և նորա վերայ դարման տանելոյ, և այս իրաւանց տէր լինելն գիտնալով՝ չկամեցաւ այլ ևս մի քանի մանաւորաց ձեռքն խաղալիկ թողուլ իւր ապագայն։ Սահմանադրութեան հաստատութիւնն զարթեցուց Հայուն սիրաը. Հայն տեսաւ և զգաց՝ որ ազատ խորհրդակցութեամբ, բարեկարգութեամբ և ուսմամբ պիտի կարենար փրկել և պահպանել զազգային գոյութիւն՝ որ օր քան զօր իւր վերջին ձգնաժամին կը մօտենար ժամանակին ինչ ինչ բերմունքներէն մղեալ։ Դժբաղդաբար մինչև այն ժամանակ Հայն մի կողմանէ եսականութեամբ և միւս կողմանէ սարկանցած վարմունքով վարժուած լինելով, ազատ գաղափարաց արտայայտումն՝ մինին ցասումն և միւսոյն անկարգ խրոխտումն պատճառեց, Էրա-ոռնէ և պարբոտ մի մի նոր բառեր էին, և նոքա որք սակայն գործածեցին այս բառերը՝ նոքա եղան ահա առաւել իրաւունքը ոտնակոխողք և պարտքը չը ճանաչողք՝ ժողովրդեան ամենատուար մասն ուսման կողմանէ զուրկ լինելով, անբարեկարգ վարժարանաց մէջ անհիմն և թերի դասախօսութիւն ստացող երիտասարդներ յանկարծ ասպարէզ ինկնելով յանուն ազատութեան ամէն բան խառնակեցին և գրեթէ ամէն իր ջնջեցին, և այն Սահմանադրութիւն կոչուած լուսատու լապտերի աշտարակը՝ որ հիացեալ ընկղման վտանգի մօտեցած ազգին նաւը պիտի փրկէր՝ բաբիլոնեան խառնակութեան աշտարակ դարձաւ։ — Ի վերջին ժամանակս գտնուեցան այնպիսի անձինք ևս՝ որք Սահմանադրութիւնը անգործադրելի համարեցան, և ոմանք «գ-ոյ և գաւ-ի վիճեր հանեցին։

Ահա այսպիսի տարակարծիք միջոցին է՝ որ Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան Ս. — Պոլսոյ Պատրիարք կնորուի։ Իւր լուսաւոր և խոհուն զգաստութիւններն, բնական հանճարն և աշխոյժն շատոնց զինքը ժողովրդեան սիրելի կացուցած լինելով, յուսամք որ նա պիտի կարողանայ տիրած անիշխանութեան և անկարգութեանց վերջ տալ և ձեռք բերել իրականապէս ժողովրդեան բարոյական և մտաւոր զարգացումը։ Մինք գիտեմք թէ իւր պաշտօնավարութեան միջոցին մեծամեծ դժուարութեանց պիտի հանդիպի, գիտեմք՝ որ շատերն ինքեան բարեկամութիւն կեղծելով՝ պիտի աշխատին զինքը սխալեցնելոյ, բայց չեմք կարծեր որ՝ նա՝ խոհեմութեամբ չկարողանայ այն դժուարութեանց յաղթել, և իւր նախորդի օրով լարուած մեքենայութեանց արտադրած վատ հետևանքները միշտ աչաց առաջ ունենալով՝ չմերժէ այնպիսի կեղծ և վատախորհուրդ բարեկամները։ Մինք Ներսէս Դերապետեան խորհուրդ տալն աւելորդ կը համարիմք, բայց չեմք կարող այսքանը չասել, որ եթէ Ներսէս Եպիսկոպոս

պիսկոպոս կը փափագի իւր Պատրիարքութեան օրով՝ միասաբեր երկպառակութիւնը բնաջինջ առնել և խաղաղութիւնը և շինութիւնը վերահաստատել Ազգին մէջ, եթէ կուզէ Ազգին գոյութիւնը և պատիւը պահպանել և նորա վարկը օտարաց առաջ բարձրացնել, եթէ ունի կամք ազգին օգտակար հանդիսանալ և նորա դէպ ի լաւն զարգացման առաջնորդել, հարկ է որ ամենայն հոգւով աշխատի նախ՝ նորա հոգեկան զգացումները զարթուցանելոյ և նորա մէջ հետզհետէ տարածուելոյ երես բռնած խանգարեալ բարոյականութիւնը վերանորոգելոյ, ուսումնարանաց արդիւնաւոր յառաջադիմութեան օգնելոյ, եկեղեցականաց բարեկարգութեան և եկեղեցւոյ կանոնաց անխախտ պահպանութեան հսկելոյ։

Այն փորձը՝ որ մի քանի վաստակաւորհուրդ անձինք փորձեցին իւր նախորդի օրով՝ Տաճկաստանի Հայը իւր միութեան կեդրոն եղող սրբավայրէն հեռացնելոյ, թէև չյաջողեցաւ, բայց քիչ մնաս չը տուաւ ազգին ընդհանրութեան օգտին։ Անջիաձնէն հեռանալով չէ որ ազգը պիտի կարողանայ պահպանել իւր ամբողջութիւնը և գոյութիւնը, այլ ինչպէս ասկից առաջ՝ նոյնպէս և այսուհետև՝ նորա հետ որդիական սիրով կապուած մնալով։

Այս կը յուսամք և կանկալեմք ահա Ներսէս Արքեպիսկոսի Պատրիարքութենէն, և ասոր համար է ահա՛ որ՝ ինչպէս Պոլսոյ ազգայնոց, նոյնպէս և մեզ չափազանց ուրախութիւն պատճառեց նորա ընտրութիւնը։

Ամենաբարին Աստուած տայ Նորին Արքաղութեան կար՝ զօրութիւն և յաջողութիւն գործելոյ զբարին և ինչ որ Ազգի ընդհանրութեան և Եկեղեցւոյ ամբողջութեան շահն կը պահանջէ, և արդիւնաւորուի իւր բարի խորհրդոց մէջ։

Այս է մեր բարեմաղթութիւնը և փափագը։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՐ ԲԻՒԶԱՆԴԵՆ.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԻԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ Կ. ՊՕԼՍՈՅ.

(Շարունակութիւն և վերջ)

Եւ եղկելի լալագին գալով որպէս զԱդամ յարտաքսեալ ի դրախտէն մնացի ի Պօղճա առասին Բ ամիս, և արդուհալ ուղարկեցի ի Կոստանդնուպօլիս Թուրքին մեծին թէ հրաման շնորհեա ինձ ազատութեան աստի և գնալ ի սուրբ Յերուսաղէմ։ Յաւուր միում կիրակի առաւօտ ի ծագիլ արևու եկն Վէզիրէն մէկ Զաւուշ, ունէր հրաման ազատութեան և գնալ ի սուրբ Յերուսաղէմ, և պատվիրեալ էր ճանապարհել զմեզ մինչ Թատոս. ելաք անտի, գոհութիւն մատուցի, և երկրպագեալ ամենասուրբ Երրորդութեան հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ամէն, ուրախութեամբ մէկ փոքրաւորով Գ օրն հասանք ի Սախրզ. Գ օր նստանք, ոչ գոյր նաւ պատրաստական, զի Անկլէզի մեծ նաւ մի կայր անդ Խոռասանդի և Գ նաւ էր առեր Գռանցոյ լի ցորենով, ի Սախրզ դատարկեց զցորեանքն և զնաւքն վաճառեաց. ի յահէ նորա ոչ շարժէին նաւք, և ես յոյժ ահ ունէի ի նոցանէ, սիրտս միշտ դող էր, զի էլչի նոցա ահ տվաւ թէ այս դրամն թէ ի ծով թէ ի ցամաք ուր և իցէ՝ կառնուն քեզնէ. միշտ աղօթէի առ Աստուած և հայցէի պահել ի նոցա պատահմանցն։ Յետ Գ աւուր եկն մէկ Թարթան զէթյէմի, Խոռասանդի ահուն հեռու նստաւ իլիմանէն, որ չէր երևէր, նորա սանտալով նորա զարիթանն եկաւ դուրս. հարցաւ Զաւուշն ինչ ազգ ես. ասաց Գռանցէ եմ. ուր կու գնաս. գնամ ի Թա-